ՀՀ Արմավիրի մարզպետարանի
զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և
վերլուծության բաժնի պետ
Լիլիթ Մուշեղյանին

Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզպետարանիզարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի փորձագետի կողմից կատարված աշխատանքի մասին

1. Մշակել եմ մարզում տուրիզմի զարգացման պլան՝ հարուստ պրակտիկ լուծումներով եւ գործիքակազմով: Մշակված պլանի շրջանակներում իրականացրել եմ հետեւյալ աշխատանքները.

- Բրենդավորել եւ մեկնարկ եմ տվել «Արմավիրի գույներ» նախագծին: Ծրագրի նպատակն է բացահայտել ու նոր շնչով ներկայացնել Արմավիր մարզի զբոսաշրջային գրավիչ կամ քիչ հայտնի վայրերը, զբոսաշրջիկների մոտ հայրենիքը բացահայտելու ցանկություն առաջացնել: «Արմավիրի գույները» և՛ բլոգ է, և՛ անհատական տուրերի ծրագիր, որը նոր էջ է բացել հայկական զբոսաշրջության բնագավառում՝ հնարավորություն տալով ոչ միայն տեսնել, լսել ու իմանալ, այլ նաև՝ դառնալ հայկական մշակույթի կրողն ու մի մասնիկը: Կատարվել են նկարահանման աշխատանքներ Սարգիս Վարդանյանի արվեստի տուն - մշակութային ակումբում, «Ոսկենի գինիներ» ընտանեկան խաղողի ու գինեգործական ընկերությունում, Մարտիրոսյանների կավագործության տանը, Երվանդաշատ ու Բագարան համայնքներում: Նկարահանումից ստացված լուսանկարներն ու տեսանյութերն օգտագործվել են հայտնի տուրիստական կայքերում, որտեղ լայն ճանաչում ու տարածում են գտել:
- Կապ եմ հաստատել մի շարք տուրիստական կազմակերպությունների հետ՝ 2021 թվականի ապրիլից տուրիստական ուղղություններ առաջարկելով դեպի Արմավիրի մարզ: Տուրիստական ծրագրերը մշակելիս հաշվի եմ առել Հայաստանում զարգացած տուրիստական մարզերի փորձը եւ փորձել եմ տեղայնացնել ու կիրառել միջազգային ստանդարտները:

Համագործակից կազմակերպություններից են «One Way» տուրիստական ընկերությունը, «Ակտի գրուպը»:

- Կապ եմ հաստատել միջազգային տուրիստական հարթակում մեծ համբավ վայելող «Absolute Armenia» ծրագրի ներկայացուցիչների հետ, և համատեղ մշակել ենք տուրիստական երթուղի: Ապրիլին այդ երթուղում նկարահանումներ պետք է իրականացվեն, որպեսզի կարողանանք դրանք ներկայացնել հանրությանը:

2. Ուսումնասիրել եմ մարզի ներկա վիճակագրական տվյալները. բնական պայմանները, ռեսուրսները, ժողովրդագրական վիճակը, տրանսպորտի եւ կապի զարգացածության աստիճանը, հանրային ենթակառուցվածքները, կրթության ու կադրային կապիտալի մակարդակը: Առանձնացրել եմ մարզի զարգացման արդիական ուղղություններն ու հնարավորությունները: Ուսումնասիրել եմ արտերկրի ռեգիոնալ կառավարման մոդելները, մասնավորապես՝ Իսրայելի, Կիպրոսի, Սլովենիայի եւ Շվեցարիայի, քանզի այդ երկրների կառավարման մոդելները մաքսիմալ մոտ են ներկա Հայաստանի պայմաններին: Կատարված ծավալուն աշխատանքների արդյունքում կազմել եմ ՀՀ Արմավիրի մարզի զարգացման ռազմավարական պլան՝ հիմնված համակարգերի մշակման, նոր ու ժամանակակից մոդելների կիրառման, պրակտիկ քայլերի եւ ճկունության վրա: Ուսումնասիրությունների ու վերլուծությունների շնորհիվ կարողացել եմ ներկայացնել մի շարք առաջարկներ մարզի ներկա զարգացման ռազմավարությունում փոփոխություններ կատարելու համար:

3. Ներգրավված եմ եղել մարզպետարանի՝ արտերկրի հետ տարվող աշխատանքներում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերի, գերատեսչությունների ու ռուսական կազմակերպությունների հետ կապեր հաստատելու, բարելավելու և համատեղ ծրագրեր իրականացնելու աշխատանքներում: Վարել եմ այդ ծրագրերի հետ կապված

նամակագրությունը, ունեցել եմ հանդիպումներ, հետևել եմ բոլոր պայմանավորվածությունների իրականացմանը:

4. 2020-ի Ղարաբաղյան պատերազմի ու դրան հաջորդած ժամանակաշրջանում մասնակցել ու իրականացրել եմ կազմակերպչական ու սոցիալական տարբեր աշխատանքներ:

5. Կազմակերպել եմ 2021 թվականին Ռուսաստանի Վոլոգոդա մարզի կողմից նախաձեռնված կոնֆերանսը, որի նպատակն էր քննարկել մեր դաշնակից երկրի հետ արդյունաբերության ոլորտում համագործակցության հնարավորություններն եւ գտնել տնտեսական կապերի ամրապնդման ուղիներ:

6. Կատարել եմ ղեկավարության եւ ծրագրերի բաժնի կողմից տրված բազմաթիվ հանձնարարականները, մասնակցել եմ զարգացման ծրագրերի բաժնի առջեւ դրված խնդիրների լուծմանը, այլ ընթացիկ եւ չպլանավորված աշխատան քներ:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
զարգացման ծրագրերի, զբոսաշրջության
եւ վերլուծության բաժնի փորձագետ՝

Շուշաննա
Կոստանյան
02.03.2021